## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը ՄՀԱՀՔԱՄԴ-ԳՀԾՁԲ-25/1

«Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար անձնակազմի տեղափոխման ծառայությունների գնման նպատակով կազմակերպված ՄՀԱՀՔԱՄԴ-ԳՀԾՁԲ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

| Չափաբաժնի համար | Գնման առարկայի համառոտ նկարագրություն | Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝ այդպիսիք լինելու դեպքում | Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/ | Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|
| **1** | Անհրաժեշտ է, ս. թ սեպտեմբերի 1-ից մինչև ս. թ. դեկտեմբերի 30-ը՝ բոլոր աշխատանքային օրերին՝ բացառությամբ դպրոցական երեխաներին տրվող արձակուրդներից, տարրական դպրոցին և դպրոցի անձնակազմին ժամը 13.20-ին (թվով 136 հոգի), այնուհետև ժամը 14:15-ին (թվով 164 հոգի) տեղափոխել՝ ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գյուղ Ալաշկերտ 2-րդ փողոց 10 շենքի հարող տարածքից դեպի ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գյուղ Արմավիր 1-ին փողոց 1 շենք (հեռավորությունը 4,5 կմ): Ժամը 16:50-ին (թվով 22 հոգի), ժամը 18:35-ին (թվով 84 հոգի), ժամը 19:25-ին (թվով 54 հոգի) և ժամը 20:15-ին (թվով 140 հոգի) ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գյուղ Արմավիր 1-ին փողոց 1 շենք հասցեից տեղափոխել դեպի ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գյուղ Ալաշկերտ 2-րդ փողոց 10 շենքի հարող տարածք:<br>Ծառայությունը մատուցվելու է 300 ուղևորի համար, որից 22 ուղևորի համար՝ 70 օր, 248 ուղևորի համար՝ 75 օր, իսկ 30 ուղևորի համար /անձնակազմ/ ՝80 օր:<br>Տեղափոխող տրանսպորտային միջոցները պետք է լինեն ավտոբուսներ՝ 2000 թվականից բարձր տարեթվի արտադրության, նախատեսված առնվազն 20 ուղևորի համար, տեխնիկապես սարքին վիճակում, նոր անվադողերով: Տրանսպորտային միջոցները համալրված պետք է լինեն տեղափոխվող անձնակազմի քանակին համապատասխան մաքուր նստատեղերով, օդափոխման, տաքացման համակարգերով: Ավտոբուսների վարորդները ուղևորափոխադրման ընթացքում պետք է լինեն պատշաճ տեսքով, ինչպես նաև ծառայություն մատուցող կազմակերպության կողմից պետք է պահպանվեն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները:<br>Ծառայության կատարման հետ կապված բոլոր տեսակի ծախսերը կատարում է ծառայություն մատուցողը:<br>Ծառայության մատուցման դիմաց վճարումը կատարվելու է ամսվա կտրվածքով՝ ծառայությունների մատուցման օրերի քանակին համապատասխան: | - | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>**<u>3-րդ կետի</u>**<br>4-րդ կետի | ոչ մի հայտ չի ներկայացվել |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՄՀԱՀՔԱՄԴ-ԳՀԾՁԲ-25/1** ծածկագրով գնումների համակարգող՝ Ցոլիկ Առաքելյանին:

Հեռախոս՝ 091066091

Էլեկտրոնային փոստ՝ tsarakelyan@mail.ru:

***Պատվիրատու՝ «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ***